

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ամենիկայի ճայֆ.

Ամերիկայի «Նուիրակ» կրօնական պաշտօնաթերթը (թ. 7.) հազորդում է որ յուլիսի 22 (ն. տ.) Նիւ-Եօրքի հայ եկեղեցու անդամների ժողովը գաղտնի քուէարկութեամբ կատարել է հոգաբարձական ընտրութիւն և ընտրուել են ինն անձինք։

Յաւալին այն է, որ տեղւոյն հայութիւնը երկառակուած է և կրքերին զոհ են ըերւում ամենանուիրական ըաները։ Թէս նոր հոգաբարձութիւնը ընտրուած ու հաստատուած է, սակայն հինը չի յանձնում կնիքը, հաշիւներն ու գոյքերը։ Թողնելով այլ պատճառները, երկառակութիւնը սուր կերպարանը է ստացել Տ. Մուշեղ Եպիսկոպոսի պատճառով, որին մի կուսակցութիւն կամենում է առաջնորդ տեսնել Ամերիկայի, թէ և ինքն Տ. Մուշեղ հրաժարում է, և Ա. Էջմիածնի կառավարութիւնն ու Կ. Պոլոյ պատրիարքարանը հիմնելով եկեղեցական կանոնների վերայ անկարելի են զտնում Տ. Մուշեղ Եպիսկոպոսի առաջնորդութիւնը։

Նոյն «Նուիրակ» թերթը առնելով Հայրենիքո-ից գլուխ է, որ Ամերիկայի հայերից ոմանք փափագում են իրանց թերթը Կ. Պոլոյ պատրիարքութեան կցել։ Սակայն պատրիարքարանի ըացասական պատասխանը ստանալուց յետոյ, յաւելցնումէ լրագիրը, «այն խումբ մը մարդոց նորագոյն ըաղձանքը Սոի կաթողիկոսութեան միացնելն էլ. եթէ այս ալ չյաջողի, Աղթամարայ կաթուղիկոսութեան... Եթէ և ոչ մէկին միանալու արտօնութիւն տրուի... իրենք պիտի կազմեն անկախ թեմա»։

Եաւ տեղեւ հովիւները կոմ պարտաւորուած են հրաժարուել, կամ հրաժարում են։

Ամերիկայի հայոց այս ցաւալի կազմակուծման հանգամանքում միսիթարական է կարդալ նոյն «Նուիրակի» մէջ որ

ա. Հայ եկեղեցառէր տիկնանց ընկերութիւնը որ կազմուած է 1910 թուին և ազգայնոց խառնակ վիճակի պատճառով գործ չէր սկսել. խռոտացել է աջակից լինել նորընտիր հոգաբարձութեան և նիւ-օլքի եկեղեցու պայծառութեան համար հոգալ:

բ. Որպէս զի հայ մանուկները չուծանան մոյրենի եկեղեցուց ու իրանց ազգութիւնից, սեպտեմբեր ամսից պէտք է սկսուեն մանուկների համար կիրակնօրեայ կրօնական դաստիսութիւններ։ Տեղի և ժամերի համար ծանուցումն կը լիլինի։

### ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

«Բիւզանդիոնը» (յուլ. 12) լսելով Բոլղարիայից եկած մի քահանայից, յայտնում է, որ բոլղարական Ախնօդն էլ հետեւելով յոյն Սինօդի կարգադրութեանը, հաղորդել է հայ հոգեռորականութեան, թէ այսուհետեւ բոլղար քահանաները հայերին հաղորդութիւն չպիտի տան և ննջեցեալ ների թաղում չպիտի կատարեն, այլ միայն յուղարկաւարութեան ներկայ պէտք է գտնուեն։ Վերջին անգամ Զումայի մէջ մի ննջեցեալ պատահած լինելով նոյն ընթացքին են հետեւել բոլղար քահանաները և երբ հարցում է ուղղուել իրանց, այդ պատասխանն են տուել։

Ինչպէս գիտենք, այս որոշումը առաջ տուել էր կ. Պոլսոյ յոյն Սինօդը, հիմա էլ նոյնը գործադրում է բոլղար եկեղեցին, առարկելով՝ որ ինքն օրթոդոքսութեան անբաժան մասն է կազմում և իւր դաւանութիւնը նոյն է։ Բոլղար Սինօդի այս կարգադրութիւնը հաղորդուած է էկպարիսին։ «Բիւզանդիոնը» առաջ բերելով օրթոդոքս եկեղեցու այս խստութիւնը, աւելացնում է։

«Միայն կը դարմանանք, որ օրթոդոքս դաւանութեան և վարդապետութեան այդ նրբամտութիւնները

հիմա միայն միտք կլիյնան, տարիներով հակառակը դուծադրուելէ յետոյ և այս ալ այնպիսի ատեն մը երբ հայերէն աւելի՝ յոյներն ու պուլկարներն են որ քրիստոնեայ հասարակութեանց համերաշխ դուծակցութեան և իրարու հանդէպ սիրալիր վերաբերման պէտքը կը շեշտեն»:

### ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Վենեայի Մխիթարեան միաբանութեան հարիւրամեայ և նրա աբբանոց յիսնամեայ յօրելեանները

Օգոստոսի 26-ին Վիեննայի Մխիթարեանները տօնեցին իրանց միաբանութեան հաստատութեան հարիւրամեակը և իրանց վանահայր Գովրիկեան Գրիգորիս արքեպիսկոպոսի քահանայութեան յիսնամեակը եկեղեցական մեծ հանդիսաւորութեամբ։

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը մի հատուածն է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան, որից 1773 թուին անջատուելով՝ սկզբում տեղաւորուեց Տրիեստում և ապա վերջնականապէս, 1811 թուին, հաստատուեց Վիեննայում։

Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնը հայ գրականութեանը մեծ ծառայութիւն է մատուցել որպէս մի ուսումնական հաստատութիւն հրատարակելով լեզուաբանական, պատմական և հայագիտական ուսումնասիրութիւններ թէ ինքնուրոյն և թէ ժարգմանական։

Գովրիկեան Գրիգորիս արքեպիսկոպոսը, որի քահանայութեան յիսնամեակն էլ կցուած է միաբանութեան հարիւրամեակի տօնին, ըացի իւր այլ գրական վաստակներից, յայտնի է Ռուգարիայի հայ գաղթականութեան անցեալի և ներկայի ուսումնասիրութեամբ, որ մեր գաղթականների պատմութեան համար մի մեծարժէք նիւթ է։

ԹԵՂԳԵԱՆ ԵԱՂԻՍԼՈՎՈՒՄ ՈՒ ՎԱՏԻԿԱՆ

«Բակո» (№ 193) լրագիրը. «La Presse associée»—ի  
հեռագրերից առնելով դրում է:

Աշտիկանում շատ պախարակում են հայ կաթողիկոսի պատրիարք Թեղղեանին այն պատճառով, որ նա վոխանակ է. Պոլիս գնալու և աշխատելու համաձայնութեան դալ հայ ազգային ժողովի հետ, հրաժարական է տուել։ Պապը հրաւիրել է նրան Հռովմ պատուերներ տալու և իւր տեղը ուղարկելու, բայց Թեղղեան եպիսկոպոսը առանց Վատիկանի գիտութեան տուել է իւր հրաժարականը է. Պօլսում, Թեղղեանի հրաժարականը ծանրացնում է ստեղծուած դրութիւնը և նրանով, որ այժմ՝ կան արդէն երկու հրաժարաւած պատրիարքներ, և երկիւղ կայթէ ազգային ժողովը օգտուելով իւր արտօնութիւնից, չի ձեռնարկի երրորդ պատրիարքի ընտրութեան, և դրանով նոր բարդութիւնների առիջ կը տայ։

### ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Նոր համայնք:

Ներքին գործոց նախարարութիւնը, առում է «Բակո» (№ 192). թոյլ է տուել Բաքրում ապրող հայ բողոքականներին առանձին լուտերական—բողոքական համայնք կազմելու։

### Օ Տ Ա Ր Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

ԱՌԻՍ ՊՐՈԽՈՍԼԱԽ ԵԿԵՂԵՑԻ

Համառուսական Եկեղեցական ժողովի մասին.

Սրբ. Ախողում, դրում է «Церк. Вѣст.» (№ 34). տիրում է այն համոզումը, թէ ժոտիկ ժամանակում համառուսական ժողով գումարելու ոչ մի հիմք չկայ։ Առաջին,